ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

29.02.2024 12:22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հարգելի՛ փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը շարունակում է իր ուշադրության կենտրոնում պահել փաստաբանական համայնքի համար առանցքային նշանակություն ունեցող «Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացուցումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի ընդունմամ պարագայում շեշտակի ավելանալու է փաստաբանական գործունեություն իրականացնելու արդյունքում գոյացած հարկային բեռը:

ՀՀ փաստաբանների պալատը Ձեզ է ներկայացնում վերոնշյալի առնչությամբ ձեռնարկված միջոցառումները և կատարված քայլերը.

- 2024 թվականի հունվարի 30-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ, որտեղ փաստաբանները քննարկել են ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (**այսուհետ՝ Նախագիծ**) հետ կապված հարցերը: (https://www.advocates.am/news/view/3785.html):

- Նախագծում առկա խնդրահարույց հարցերի առնչությամբ ՀՀ փաստաբանների պալատը պաշտոնապես հանդես է եկել առարկություններով և դիտողություններով, որն ուղարկվել է համապատասխան գերատեսչություններին՝

- ՀՀ վարչապետի աշխատակազմ
- ՀՀ ֆինանսների նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն

Բացի այդ, Նախագծի խնդրահարույց դրույթների վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին՝ գրավոր կարծիք ներկայացնելու նպատակով՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Սահմանադրական օրենքի իրավակարգավորումները:

ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական դիրքորոշումը հրապարակված է նաև «Advocates.am»կայքում (https://www.advocates.am/news/view/3790.html):

- Նախագծի խնդրահարույց դրույթները բարձրաձայնվել են նաև տպագիր և հեռարձակվող մամուլով (հեռուստատեսություն, ռադիո, կայքեր), ինչպես նաև զանգվածային լրատվության այլ միջոցներով (սոցիակալան հարթակներ, մամուլի ակումբներ):

Ստորև ներկայացվում է հեռարձակված հարցազրույցների և պաշտոնական հաղորդագրությունների հղումների մի մասը.

Հարցազրույցներ

«Հ2» Հ/Ը «Խոսքի իրավունք»

https://www.youtube.com/watch?v=oN2gaSxt_HQ

«Կենտրոն» Հ/Ը «PressԿենտրոն»

https://www.youtube.com/watch?v=jaOdT2j9Ers

«5-րդ ալիք» Հ/Ը

https://www.youtube.com/watch?v=OjiDcMOIXFA

«Երկիր Մեդիա» Հ/Ը «Երկրի հյուրասրահը»

https://www.youtube.com/watch?v=LvUYXwqqpJU&t=1327s

«168.am»

https://www.youtube.com/watch?v=EGvJqAVl8W8

«Hraparak.am»

https://hraparak.am/post/7a903d5eb047562aabc06ec3da4af029

Ռեպորտաժներ և մամուլի ասուլիսներ

«News.am»

https://news.am/arm/news/804431.html

«Yerkir.am»

https://yerkir.am/hy/article/2024/01/29/24304

«24news.am»

https://www.24news.am/news/324672

«livenews.am»

https://livenews.am/press/2024/268787/29/11/54/?fbclid=IwAR3GkaaSMjXZ2dJNq23ra6KuCvEuoUnS7FtizzigClhsVDfga7JLethbils_aem_Acl9B5GzQ3yZhYCEr525zeIAJYG5QVFtzh4b7IjJLYK4L8lMVSsC9B20rd_OG847wtU

«Aravot.am»

https://www.aravot.am/2024/02/06/1398284/

«Հանրային ռադիո»

https://hy.armradio.am/archives/551285

«Հ2» Լրաբեր

https://www.youtube.com/watch?v=al9DWZqfSTQ

«Կենտրոն» Հ/Ը լուրեր

https://www.youtube.com/watch?v=kpxRBK-x73M

«Երևան թդեյ»

https://yerevan.today/all/iravakan/135601/akademiayi-rektory-pastabanoutyan-harkeri-avelacman-masin

«Հանրային ռադիո»

https://hy.armradio.am/archives/551285

«Մեդիակենտրոն»

https://www.facebook.com/mediacenterarmenia/videos/1524311928358837/

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացրած պաշտոնական հաղորդագրությունները մամուլում տարածվել են նաև սույն գրության մեջ չնշված տասնյակ այլ լրատվամիջոցների կողմից (oragir.news, past.am, pastinfo.am, lurer.com, iravaban.net, Operativ.am, newday.am, tert.am, aysor.am, panorama.am և այլն):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Ազգային ժողովում քննարկում իրականացնելու ՀՀ փաստաբանների պալատի, Նախագիծը մշակող և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Քննարկման արդյունքներով կիրավիրվի ակումբի նիստ՝ հետագա ձեռնարկվելիք քայլերը որոշելու համար:

Հ.Գ. Նախագիծն ընդունելի չէ ՀՀ փաստաբանների պալատի կողմից, դրա ընդունումը հանգեցնելու է Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության, արդար դատաքննության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների խախտման:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })